<<ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ>> ՀԿ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Հետազոտության թեման՝ Գործնական աշխատանքների իրականացումը առարկայի դասավանդման ընթացքում

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Կարինե Մամիկոնյան

ՈՒսումնական հաստատություն՝ «Երևանի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 11 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ

ԵՐԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....2
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ.....5
ԳԼՈՒԽ 1
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ1.....7
ԳԼՈՒԽ 2
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.....10
ԴԱՍԻ ՊԼԱՆ.....14
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....16
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աճող սերնդի կրթվածությունը և արժեհամակարգի ձևավորվածությունը պայմանավորված է մանկավարժների մեթոդական-մասնագիտական պատրաստվածությամբ, գործնական աշխատանքների ճիշտ կազմակերմամբ և հմտությունների որակով:

Ուսուցման և ուսումնառության ընթացքի արդյունավետությունը պայմանավորված է ուսուցիչի մասնագիտական կարողությունների հմուտ կիրառումից և կոմպետենտության աստիճանից. գործընթացի ճշգրիտ պլանավորումը, գործնական աշխատանքների կազմակերպումը, գիտելիքի փոխանցման, դրա ինքնուրույն ձեռքբերման ուղիների մատնանշումը, սովորողներին սովորել սովորեցնելու կարողությունը փաստում են մանկավարժական համակարգված գործունեության մասին: Հետևաբար այսօր դասավանդողից պահանջվում է շարունակական ինքնակրթություն, մասնագիտական կարողությունների վերանայում և վերամշակում՝ արդի պահանջներին համապատասխան:

Մանկավարժագիտական արդի ուսումնասիրություններում մեծ տեղ է հատկացվում հատկապես ուսուցման արդյունավետ պայմաններ մշակելու և ուսումնական գործընթացը դրանցով ապահովելու խնդրին: Ուսուցման ժամանակակից տեսությունների հիմնական առանձնահատկություններից է դասավանդման գործընթացում գործնական աշխատանքների կազմակերպման մոտեցում դրսևորելու անհրաժեշտությունը: Այս հարցի քննարկումը հանգեցրել է կրթության բովանդակության, մեթոդների և ձևերի, ուսուցման արդյունավետության գնահատման սկզբունքների վերանայման անհրաժեշտությանը, որն էլ ապահովում է իմ կողմից ընտրված թեմայի արդիականությունը և հրատապությունը:

Հետազոտության նպատակն է՝

- Տեսական գիտելիքների և մեթոդների, դրանք գործնականում կիրառելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը:
- Բանավոր և գրավոր հմտությունների ձևավորումը, դիտարկելու, կռահելու, եզրակացություններ անելու կարողությունների ձևավորումը:
- Որոշումներ կայացնելու, սեփական և ուրիշների դատողություններին քննադատաբար վերաբերվելու, խմբում աշխատելու կարողությունների ձևավորումը:
- ՈՒշադրության, հիշողության, աշխատասիրության, հանդուրժողականության, նպատակասլացության, համբերության զարգացումը:
- Սեփական ուժերի նկատմամբ վստահության սերմանումը:
- Ինքնուրույն աշխատելու, համաձայնության գալու մշակույթի ձևավորումը:

Հետազոտության խնդիրներն են՝

1. ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը
2. բացահայտել գործնական աշխատանքի կազմակերպմանը նպաստող գործունեության ձևերը
3. անդրադառնալ գործնական աշխատանքի իրականացմանը մայրենիի դասերին

Հետազոտության հարց՝

Ինչպես ճիշտ իրականացնել գործնական աշխատանքները մայրենիի դասերին, որպեսզի սովորողներն աշխատեն ինքնուրույն:

Գրականության ակնարկ

Ժամանակակից կրթական հայեցակարգերում ավելի է կարևորվում սովորողների բարձրակարգ մտածողության զարգացման խնդիրը: Աշխարհում տեղի ունեցող արագընթաց զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով գիտելիքահեն տնտեսության և տեղեկատվական հասարակության պայմաններում գործող և ապրող մարդու ձևավորման նոր պահանջ: Եվ դա իր հերթին առաջ է բերում կրթության բովանդակության վերանայման ու արդիականացման խնդիր: Գործնական աշխատանքի մասին տեղեկացվելիս սովորողները պետք է հստակ պատկերացում ունենան, թե ինչ է պահանջվում իրենցից: Սա աշխատանքի կազմակերպման նախապատրաստական փուլն է (անվանումը պայմանական է), երբ աշակերտները սովորաբար ավելի շատ են խորհրդատվության կարիք ունենում: Կարևոր է, որ այդ խորհրդատվությունը լինի պարբերական. հնարավոր է, որ տարբեր աշակերտներ տարբեր ժամանակներում ուսուցչի կամ մեկ այլ մեծահասակի օգնության կարիքն ունենան:

Ուստի հարկավոր է նրանց տեղեկացնել, որ գործնական աշխատանքին առնչվող հարցերով կարող են դիմել ամեն օր՝ դասերից հետո: Փորձառու ուսուցիչը խորհրդատվության ընթացքում ոչ թե ուղղակի և սպառիչ պատասխան է տալիս աշակերտների հարցերին, այլ ուղղորդում է նրանց, մեկնաբանում, աջակցում, երբեմն նաև նոր հարցեր հավելում՝ մղելով նրանց ինքնուրույն հետազոտական աշխատանքի: Խորհրդատվության նպատակը աշակերտին հարցի լուծումը գտնելու գործում աջակցելն է, այլ ոչ թե նրա փոխարեն լուծումներ առաջադրելը: Այդպես վարվելով՝ ուսուցիչն օգնում է իր սաներին՝ սովորել սովորել, իմացածը համակարգել և կիրառել այն կոնկրետ առաջադրանքներ կատարելիս: Չէ որ հենց սա է գործնական աշխատանքի հիմնական նպատակը:

Աշակերտների մեջ նման կարողության (գործնական կարողության) առկայությունը նրանց իսկ կրթվածության (ուսումնառության) որակի հիմնական և գլխավոր ցուցանիշն է լինելու ողջ կյանքում: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է, որ ուսուցիչը ուսումնական գործընթացը կազմակերպելիս և իրականացնելիս հիմնական շեշտը դնի նաև աշակերտների մեջ գործնական կարողությունների ձևավորման և զարգացման հարցերի վրա: Հենց այս տեսանկյունից է, որ արժևորվում է գործնական աշխատանքի դերը՝ ոչ միայն որպես տեսական նյութի ամրապնդման միջոցի, այլև որպես սովորածը գործնականում կիրառելու հնարավորության: Կոնկրետ խնդիրներով ու բովանդակությամբ պայմանավորված, գործնական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես դասերի ժամանակ, այնպես էլ դասերից դուրս: Գործնական աշխատանքներն արդյունավետ իրականացնելու համար ուսուցիչը պետք է՝

- նախապատրաստական աշխատանք տանի աշակերտների հետ, որպեսզի նրանք ոչ միայն իմանան տեսական այն նյութը, որի հիման վրա պետք է կատարեն գործնական աշխատանքը, այլև ծանոթ լինեն այն իրականացնելու հնարներին ու միջոցներին,
- ապահովի աշակերտներին գործնական աշխատանքն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներով (ուսումնական օժանդակ նյութ,մոդելներ, գործիքներ, սարքեր և այլն),
- վերահսկի աշխատանքի կատարման ընթացքը, անհրաժեշտության դեպքում ինքը ևս ներգրավվի այդ աշխատանքում,
- վերլուծի և գնահատի կատարված աշխատանքը:

Գործնական առաջադրանքները կարելի է հանձնարարել ինչպես թեմայի ուսուցումը սկսելուց առաջ, այնպես էլ թեմայի (տեսական նյութի) ուսուցումն ավարտելուց հետո: Ուսուցողական բնույթի գործնական առաջադրանքները կոչված են նպաստելու հենց դասի ընթացքում տեսական նյութի յուրացմանը և կարող են օժանդակել աշակերտին ինքնուրույն հանգել տեսական այն հետևություններին, որոնց մասին խոսք է գնում ուսումնական թեմայում: Որպես կանոն, դրանք առաջադրվում են դասարանի բոլոր աշակերտներին և ուսուցչի կողմից պարտադիր ուղղորդման կարիք են զգում:

Գործնական աշխատանքները կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակներում՝ անպայմանորեն կառուցվելով առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, ինչն էլ պայմանավորվում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը:

Գործնական աշխատանքները բազմազան են . պաստառի ձևավորումից մինչև էքսկուրսիաների ընթացքում ձեռք բերած գիտելիքների, տեսածի, լսածի ներկայացում ամենատարբեր միջոցներով, որը կարող է լինել պաստառ, սահիկ և այլ:

Գործնական աշխատանքները կարող ենք իրականացնել ինչպես անհատապես,այնպես էլ խմբերով, ինչպես դպրոցում, այնպես էլ տանը: Առաջադրանքների ծավալը պլանավորելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների աշխատանքի տեմպը: Ժամանակը ճիշտ կազմակերպելու համար պետք է նախապես կատարել ինքնուրույն աշխատանքի համար պլանավորված առաջադրանքը: Այդ դեպքում մենք առաջադրանքի կատարման համար ուսուցչի կողմից ծախսված ժամանակը անհրաժեշտ է բազմապատկել երեքով, հենց հատկապես այդքան րոպե է անհրաժեշտ առաջադրանքի կատարման համար: Առաջադրանքի կատարման ընթաքում ուսուցիչը կարող է հասկանալ, թե ինչ տարրեր կարող են արգելակել կամ արագացնել սովորողների աշխատանքը: Առաջադրանքները պետք է ընտրել այնպես, որ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրության զարգացմանը:

ԳԼՈՒԽ 1
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Անժխտելի է, որ ճանաչողության հիմքը պրակտիկան է: Ուստի աշակերտներին պետք է հասկանալի դարձնել այն, որ տեսական հետազոտությունները կատարվում են ոչ միայն հանուն գիտության, այլև հանուն պրակտիկ գործունեության զարգացման, հանուն մարդկանց կենսապայմանների ապահովման և բարելավման: Պրակտիկայում առաջադրված խնդիրները լուծվում են տարբեր գիտությունների միջոցով: Այդ խնդիրների գիտական լուծումները փորձարկվում և ներդրվում են պրակտիկայում:

Նա պետք է հասկանա, թե որքան կարևոր է ձեռք բերած տեսական գիտելիքները կյանքում հանդիպող առօրյա իրադրություններում կիրառել կարողանալը: Գործնական աշխատանքը ընթացիկ գնահատման արդյունավետ տեսակներից է Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված 8 առանցքային կարողունակությունների զարգացումն ապահովելու համար:

Գործնական աշխատանքներ կիրառվում են բոլոր ուսումնական առարկաների շրջանակում՝ անպայմանորեն կառուցելով առարկայի չափելի վերջնարդյունքների վրա, ինչն էլ պայմանավորում է առաջադրանքի և աշխատանքի տեսակի ընտրությունը: Գործնական աշխատանքների դասակարգման հիմքում դրվում է սովորողի գործունեության ձևը, և ըստ այդմ գործնական աշխատանքները բաժանվում են 3 խմբի՝

- վերարտադրողական, որոնք հնարավորություն են տալիս ցուցադրելու՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում անել սովորողը
- մասամբ որոնողական, երբ սովորողը պետք է ոչ միայն ցույց տա՝ ինչ է սովորել և ինչ է կարողանում, այլև կատարի լրացումներ, լուծի իրեն առաջադրված խնդիրը
- ստեղծագործական, երբ սովորողը ինքը պետք է ինքնուրույն կամ խմբի անդամների հետ լուծում գտնի առաջադրված խնդրի համար՝ ցուցադրելով կարողունակությունների զարգացման որոշակի մակարդակ

Սկզբնական փուլում ցանկալի չէ փորձել իրականացնել գործնական աշխատանքների բարդ տեսակներ. պետք է պարզ աշխատանքների իրականացումից աստիճանական անցում կատարել դեպի բարդերը:

Նման մոտեցումը կօժանդակի աշակերտների մեջ պարզագույն այնպիսի հմտությունների ձևավորմանը, որոնք անհրաժեշտ են լինելու առավել բարդ առաջադրանքներ կատարելիս՝ ընդհուպ ինքնուրույն որոշակի հետազոտական աշխատանքների ժամանակ:

Գործնական աշխատանքների հիմնական նպատակներն ու խնդիրներն են՝

1. ձևավորել և զարգացնել սոցիալական հմտություններ,

2. մատուցել կիրառման համար անհրաժեշտ տեսական և գործնական նյութ,
3. նպաստել անհատի ինքնադրսևորմանը,կենսագործունեությանը և կրթության շարունակականության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը:

Գործնական աշխատանքը դպրոցում բավականին մեծ դեր և նշանակություն ունի: Այսպիսի աշխատանք կատարելիս սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Այն դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Ուսուցչի կարևորագույն գործառույթը գործնական աշխատանքներ իրականացնելիս սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացները մանկավարժորեն կառավարելն է՝ հաշվի առնելով նրանց հոգեբանական, տարիքային առանձնահատկություններն ու ընդունակությունները, զարգացման մակարդակը, կրթական կարիքները՝ ստեղծելով համապատասխան մանկավարժական պայմաններ: Մանկավարժական գործընթացի կառավարումը նախ և առաջ սկսվում է նպատակի առաջադրումից, սովորողների ֆիզիկական և հոգեկան առանձնահատկությունների հաշվառումից, առանց որի հնարավոր չէ արդյունավետորեն իրականացնել մանկավարժական գործընթացը:

Մանկավարժական գործընթացի արդյունավետ իրականացման համար կարևոր են նաև մանկավարժական հայտորոշումը և արդյունքների կանխատեսումները, որոնք ուսուցչին տալիս են մեկ քայլ առաջ տեսնելու, սեփական գործունեության արդյունքները նախագծելու հնարավորություն՝ տեսականը վերածելու գործնականի:

Ուսումնասիրելով մանկավարժության պատմությունը, ծանոթանալով հայ և օտար ազգերի մանկավարժների հայացքներին, առաջադրած սկզբունքներին, մեթոդաբանությանը՝ առանձնացրել եմ մի քանիսին, ովքեր ուսումնառության մեջ կարևորություն են տվել գործնական աշխատանքներին: Ժ.Ժ.Ռուսոն պահանջեց բոլոր երեխաներին տալ աշխատանքային դաստիարակություն ու նրանց նախապատրաստել աշխատանքի: Նա գտնում էր, որ հարկավոր է ուսուցման ընթացքում ուշադրություն դարձնել տեսական գիտելիքների գործնական ուղղվածությանը և զարգացնել դրանք: Թ.Մորին, Թ.Կամպանելլային, Սեն- Սիմոնը, Շ .Ֆուրյեին, Ռ. Օուենին այն կարծիքին էին , որ ճիշտ դաստիարակության միջոցով կարելի է ստեղծել բավականության և արդարացիության սկզբունքների վրա հիմնված հասարակություն, սակայն ուշադրության կենտրոնում հարկավոր է պահել գործնական ուղղվածությունը: Ե.Ա.Գոլանտը, Ս.Ի.Պերովսկին ուսուցման մեթոդները դասակարգել են երեք խմբերում՝ խոսքային, զննական և գործնական: Դասակարգելիս հիմք են ընդունել ինֆորմացիայի ըմբռնման բնույթը:

Հարկ եմ համարում նշել այն կարևոր հանգամանքը, որ մանկավարժական պատմության ընթացքում առաջատար մանկավարժները կարևորել են գործնական

աշխատանքները և առանձնահատուկ ուշադրություն են դարձրել դրանց իրագործմանը:

ԳԼՈՒԽ 2
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Գործնական աշխատանքների կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել գործնական աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը,դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին:

Մայրենիի դասերին գործնական աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ, հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:

Աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ գործնական աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և , վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն: Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին:

Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:

Սովորաբար, աշակերտները ոչ միաժամանակ են ավարտում գործնական աշխատանքը, եթե , իհարկե, աշխատանքն ունի անհատական բնույթ: Գործնական աշխատանքների համար առաջադրանքներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում սովորողներից պահանջում է տարբեր ժամանակահատված: Այդ պատճառով նպատակահարմար է նախապես պատրաստել առաջադրանքներ, լրացուցիչ առաջադրանքներ՝ արագ աշխատող աշակերտների համար:

Դժվար է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք համապատասխանում են բոլոր աշակերտների ներուժին: Եթե առաջադրվում է պարզ, միատիպ վարժություններ,օրինակ՝տեքստից դուրս գրել դ-տ-թ բաղաձայնների

ուղղագրությանը վերաբերող բառեր, ապա առաջադրանքների տարբերակումը կարգավորվում է ծավալով: Առավել դժվար է, օրինակ ընտրել յուաքանչյուր աշակերտի ներուժի համապատասխան առաջադրանքներ: Այդ պատճառով նպատակահարմար է առաջադրել տարբերակված առաջադրանքներ՝ հաշվի առնելով սովորողների առանձին խմբերի ներուժը:

Սակայն պետք է նշել ,որ ըստ բարդության աստիճանի տարբեր առաջադրանքներ ընտրելը բավականին բարդ է: Ընտրել հեշտ առաջադրանք, որը համապատասխանում է թույլ աշակերտի ներուժին, դժվար չէ: Բայց այստեղ մի մեծ վտանգ է թաքնված:

Եթե թույլ կարողություններ ունեցող աշակերտը դասից դաս անընդհատ դյուրին աշխատանք կատարի նույն պահանջով, ապա այդպես կարող ենք խորացնել նրա զարգացման հետ կապված խնդիրները: Այդ պատճառով այդպիսի սովորողների համար ճանաչողական առաջադրանքների ընտրության ընթացքում ուսուցիչն իր առջև նպատակ է է դնում. Սկզբում աշխատանքում ներառել պարզ առաջադրանքներ, ապա աստիճանաբար յուրացման համար ներմուծել առավել բարդ նյութեր:

Գործնական աշխատանքի համար ցանկալի է առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում: Միայն այդ դեպքում գործնական աշխատանքը կնպաստի սովորողների ճանաչողական ունակությունների ձևավորմանը և նախաձեռնողականության դրսևորմանը: Գործնական աշխատանքը կազմելիս ցանկալի է, որ նախատեսվող առաջադրանքները հետաքրքրեն սովորողներին:

Առաջադրանքների բովանդակությունը պետք է մատչելի լինի աշակերտին, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միևնույն ժամանակ գտնվի նրանց զարգացման «մերձակա գոտում», պարունակի որոշակի դժվարություն, որը երեխան կարող է հաղթահարել: Յուրաքանչյուր թեմայի շուրջ առաջադրանքների ընտրության ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հասկացության բոլոր հատկանիշների բազմակողմանիորեն ամրապնդմանը, հստակ առանձնացնել այն կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևակերպել և ամրապնդել:

Պատահականության բացառումը նպաստում է դասի արդյուանվետության բարձրացմանը: Առաջադրանքների համակարգը պետք է կազմակերպել փուլ առ փուլ: Անհրաժեշտ է սկսել տիպային առաջադրանքներից, մանրամասն բացատրել դրանց լուծման մեթոդները: Ընդ որում աշակերտներին պետք է առաջարկել առաջադրանքը կատարել ըստ օրինակի:Այնուհետև անհրաժեշտ է առաջադրել նույնատիպ առաջադրանքներ: Հետո կարելի է առաջարկել առաջադրանքներ՝ չափազանց համառոտ հրահանգ տալով: Վերջին փուլում անհրաժեշտ է առաջարկել առաջադրանքներ ամբողջովին ինքնուրույն կատարելու համար: Այս փուլում նպատակահարմար է սովորողներին առաջարկել ստեղծագործական բնույթի առաջադրանքներ:

Գործնական աշխատանքները նպաստում են խորացնելու դպրոցականների գիտելիքները,զարգացնում նրանց ճանանչողական ակտիվությունը: Պատկերավոր ասած՝ մեզ շրջապատող աշխարհը ստեղծագործական լաբարատորիա է,որտեղ ընթանում էճանաչողական գործընթացը: Աշակերտների գործնական աշխատանքը մայրենիից մի ոլորտ է, որտեղ շաղկապվում են գիտելիքն ու կարողությունը,տեսությունն ու պրակտիկան: Ինչպես գիտենք՝ ձևավորող գնահատման հիմնական նպատակը ուսուցման և ուսումնառության բարելավումն է, ինչը հնարավոր է սովորողի՝ սեփական կրթության մեջ ակտիվ դերակատարում ունենալու պարագայում:

Մասնակիցը լինելով սեփական ուսումնառության պլանավորման, իրականացման և վերլուծության փուլերին՝ սովորողը նպատակային սովորում է սովորել: Գործնական աշխատանքը նպաստում է, որ աշակերտը կարողանա մտածել կարդացածի շուրջը, առանձնացնել գլխավորը երկրորդականից: Այսինքն՝ տեսական գիտելիքի գործնական կիրառումն է ստեղծագործական մոտեցմամբ: Գործնական աշխատանքի ճիշտ անցկացումը Մայրենի առարկայից կարևոր է նաև այն պատճառով, որ այն ձևավորող գնահատման ձևերից է: Գործնական աշխատանքների ընթացքում պետք է իրականացվեն այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գիտելիքների որոնումը, դրանց իմաստավորումը, ամրապնդումը, կարողությունների, հմտությունների զարգացումը, գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը:

Որպես մանկավարժական երևույթ՝ գործնական աշխատանքը մի կողմից ուսումնական առաջադրանք է, այսինքն՝ այն, ինչ պետք է անի աշակերտը, մյուս կողմից՝ այդ առաջադրանքի կատարման ընթացքում համապատասխան գործունեության՝ հիշողության, մտածողության, ստեղծագործական երևակայության դրսևորման ձև, որն աշակերտներին տալիս է միանգամայն նոր, նախկինում նրան անծանոթ գիտելիքներ, կամ էլ արդեն ունեցած գիտելիքների խորացում:

Գործնական աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները.

1. Ցանկացած գործնական աշխատանք պետք է ունենա կոնկրետ նպատակ:
2. Գործնական աշխատանքի ընթացքում երեխաները պետք է կարողանան կիրառել իրենց՝ մինչև այդ յուրացրած գիտելիքներն ու կարողությունները:
3. Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա կատարման ընթացքը և պետք է յուրացնի ինքնուրույն գործելու հնարքները:
4. Գործնական աշխատանքը պետք է համապատասխանի սովորողների կարողություններին:
5. Գործնական աշխատանքի ընթացքում ստացած արդյունքները կամ եզրահանգումները պետք է կիրառվեն ուսումնական գործընթացում:
6. Անհրաժեշտ է ապահովել տարբեր տեսակի գործնական վարժությունների համադրումը:

7. Գործնական աշխատանքի բովանդակությունն ու քայլաշարը պետք է հետաքրքրություն առաջացնեն:
8. Գործնական աշխատանքը պետք է ապահովի սովորողների ճանաչողական տրամաբանական կարողությունների զարգացումը:
9. Գործնական աշխատանքի բոլոր տեսակները պետք է ապահովեն ինքնուրույն ճանաչողական գործնեություն ծավալելու կարողությունը:

Որպես գործնական աշխատանքի տեսակ մայրենիի ժամերին կարելի է անցկացնել դերային խաղ, որն ունի կիրառման լայն հնարավորություններ: Սակայն պետք է անկեղծորեն նշել, որ դերային խաղը ոչ միշտ է կիրառվում նպատակային, կամ որ ավելի ճիշտ կլինի ասել՝ ոչ միշտ է լիարժեքորեն իրացվում դերային խաղի ներուժը: Այն իրականում շատ ավելի լուրջ ու լայն հնարավորություններ է տալիս յուրաքանչյուր սովորողի իմացական և հուզակամային որակների զարգացման, քննադատական մտածողության, իրավիճակում կողմնորոշվելու, ինքնարտահայտվելու և ինքնադրսևորվելու համար:

Պետք է նշել, որ դերային խաղն իր մեջ ամփոփում է գործնական աշխատանքների բոլոր 3՝ վերարտադրողական, որոնողական և ստեղծագործական տեսակների տարրեր: Դերային խաղին պետք է վերաբերվել ոչ թե ժամանցի, այլ գործնական բազմափուլ աշխատանքի, որի յուրաքանչյուր փուլ լուծում է կոնկրետ նպատակներ: Հետևաբար, անհրաժեշտ է հանգամանորեն պլանավորել դերային խաղը՝ նախապես սահմանելով նպատակ, ձևակերպելով չափելի վերջնարդյունքներ:

Դերախաղի արդյունավետությունը ապահովելու համար հարկավոր է, որ ուսուցիչը հասկանալի և պարզ ձևակերպի խաղի հրահանգները, դերերի վերաբերյալ ցուցումները շարադրի այնպես, որ սովորողները անձնական նախաձեռնության հնարավորություն ունենան: Միաժամանակ այնպիսի պահանջներ դնի, որոնք կնպաստեն դերախաղի միջոցով ուսումնական նպատակին հասնելուն, խաղն ընտրի տարիքային խմբին համապատասխան, նախապատրաստի համապատասխան պարագաներ և այլն:

Մայրենի լեզուն ժողովրդի գոյության հիմքն է, նրա պատմությունն է ու մշակույթը, ոգին և էությունը: Այն սուրբ է, ինչպես մայրը, ինչպես նախնիների աճյունը, ինչպես սրբազան Արարատ լեռը: Աշակերտների դերախաղերի, նկարների, պաստառների, ասույթների, միջոցով դասաժամին պետք է կարևորել մայրենիի առաջնայնությունը, ներկայացնել հայոց այբուբենի ոգին, շունչը, զորությունը, մաթեմատիկական և փիլիսոփայական կողմը:

Դասի պլան

Առարկան՝ Մայրենի
Դասարանը՝ 6-րդ
Թեման՝ Ավետիք Իսահակյանի <<Արագածին>> բանաստեղծությունը
Գեղարվեստական և գիտական խոսք
Նպատակները՝
1. առարկայական/ակադեմիական/
Աշակերտը կսովորի և կիմանա՝

- տեղեկություններ Ավ. Իսահակյանի կյանքի և գործի մասին
- բանաստեղծության գաղափարական բովանդակությունը
- հայրենի բնաշխարհի մասին/Արագածի մասին/
- գեղարվեստական խոսքի լեզվաոճական առանձնահատկությունները
- գիտական խոսքի լեզվաոճական առանձնահատկությունները

Աշակերտը կկարողանա՝

- պատմել Արագած լեռան մասին
- բանավոր և գրավոր խոսք կազմել
- ընդհանուր զարգացում
- երևակայության, պատկերավոր մտածողության զարգացում։

Ուսումնական նյութեր՝ Արագածին վերաբերող այլ պատմություններ, երաժշտություն։
Կիրառվող մեթոդներ՝ <<Դասախոսություն >>, դերային խաղ։
Նախապատրաստական աշխատանք. նախօրոք դասարանը բաժանվում է խմբերի՝զեկուցողներ, գրականագիտական տեղեկություններ հաղորդողներ, 3-րդ խումբը կներկայացնի Արագածի մասին զրույց՝ դերային խաղի միջոցով, 4-րդ խումբը պետք է պատրաստվի 3-րդ խմբի ներկայացրածի վերլուծությանը։
Դասի ընթացքը
Խթանում

Դասն սկսվում է Լեյլա Սարիբեկյանի <<Միասնության շուրջպար>>երգով։ Սահիկների միջոցով ցուցադրվում է Արագածը լեռը։ Զեկուցողներն, իրար լրացնելով, պատմում են բանաստեղծության մասին՝ կիրառելով գիտական բառապաշարի բառեր։

Գրականագիտական խմբի աշակերտները պատմում են գիտական խոսքի առանձնահատկությունների, բառապաշարի մասին։ Համեմատություն են կատարում 15 սահիկներով ցուցադրված նկարների, գիտական խոսքի միջև, կատարում եզրակացություն. նրանք տալիս են բնության իրական պատկերը։
3-րդ խումբը ներկայացնում է Արագած լեռան մասին պատմող զրույցը՝ դերային խաղի միջոցով։

Իմաստի ընկալման փուլ

Ցուցադրվում են Արագածը տարվա տարբեր եղանակներին պատկերող նկարները։

4-րդ խումբը հակիրճ տեղեկություններ է հաղորդում Ավ. Իսահակյանի մասին, հատկապես՝ նրա մանկության մասին։

Գրականագիտական խմբի աշակերտները ներկայացնում են գեղարվեստական խոսքի առանձնահատկությունները։

Կշռադատման փուլ

Անդրադարձ

Վերջում տալիս եմ հարց.

Դուք ներկայացրեցիք <<Արագածին>> բանաստեղծությունը գիտական և գեղարվեստական խոսքի միջոցով, լսեցիք երգ, դիտեցիք պատկերներ։ Դուք ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով կարող եք նկարագրել Արագածը։ Վերջում տրվում է անհատական տնային հանձնարարություն. Գրել գիտական կամ գեղարվեստական շարադրանք՝ <<Արագածն իմ աչքերով>> թեմայով։

Իրականացնել նկարազարդում։

Եզրակացություն

Այսպիսով, վերլուծելով վերոնշյալ թեման, եկանք այն եզրահանգման, որ գործնական աշխատանքի մասին տեղեկացվելիս սովորողները պետք է հստակ պատկերացում ունենան, թե ինչ է պահանջվում իրենցից:

Մայրենիի ժամերին, իրականացնելով գործնական աշխատանքներ, ձևավորում ենք այնպիսի կարողություններ և հմտություններ,որոնք վերառարկայական են և պետք են աշակերտին ողջ կյանքի ընթացքում:

Մասնավորապես՝ սովորողները՝ զարգացնում են իրենց աշխարհաճանաչողական գիտելիքները, ձեռք են բերում սոցիալական հմտություններ, իրենց աշխատանքներում դիտարկում են տեսականի և գործնականի կապը, ինքնադրսևորվում են:

Գործնական աշխատանքի համակարգված կազմակերպմամբ հնարավոր է հասնել այն բանին, որ երեխաները ճկուն և խորը յուրացնեն հասկացությունները, օրինաչափությունները, դաստիարակել նորը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատարելագործման համար:

Գործնական աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի ՝ արագացնում է սովորողների գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը, իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:

Դասերին գործնական աշխատանքների պարբերաբար կազմակերպումը սովորողների մոտ մշակում է ինքնուրույն աշխատելու հիմնարար կարողությունները:

Դասի նպատակին հասնելու լավագույն միջոցներից մեկը ճիշտ մեթոդների և միջոցների ընտրությունն է: Միայն այդ դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց ղեկավարել սովորողների զարգացումը, աշխարհայացքի ընդլայնումը, երբ տարվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ամիրջանյան Յ., Մանկավարժություն, Երևան, 2005.
2. Կ.Թորոսյան,Կ.Չիբուխչյան<<Գործնական աշխատանքներ մայրենիից>>, <<Զանգակ>> հրատարակչություն,2017թ.
3. Գյուլամիրյան Ջ., Մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987.
4. Կ.Թորոսյան, Կ.Չիբուխչյան <<50 հարց ու պատասխան տարրական դասարանների համար>>: Մաս I, «Զանգակ» հրատարակչություն, 2013թ:
5. Հանրակրթության պետական կրթակարգ: Միջնակարգ կրթության պետական չափորոշիչ. – Եր., <Անտարես>, 2004.
6. Մանդինյան Ս., Մայրենի լեզվի դասատվություն, «Արարատ», 1889, թիվ 9:
7. Սարգսյան Լ., «Խոսքի զարգացման պարապմունքները», Երևան, Զանգակ հրատարակչություն, 2015թ.